# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N «ՀՀՓԿ-ՄԱԾՁԲ-09/26»-Հ1

# 06.02.2026թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ «ՀՀՓԿ-ՄԱԾՁԲ-09/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» «ապրիլի» 2026թ.

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս լիազորված անձ Հայկ Կարապետյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և Ֆ/Ա Անի Հարությունյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2026թ. փետրվարի 06-ին կնքված N **«ՀՀՓԿ-ՄԱԾՁԲ-09/26»** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓԱՍՏԸ

1.1. Կողմերը հաստատում են, որ Պայմանագրով նախատեսված հոգեբանական ծառայությունները մատուցվել են մասնակի ծավալով:

1.2. Փաստացի մատուցված ծառայությունների ծավալը գնահատվել է Կողմերի կողմից և ընդունվել է որպես բավարար՝ սույն համաձայնագրով սահմանված գումարի չափով:

## 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2.1 Պայմանագրով **սահմանված** ընդհանուր 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքից փաստացի մատուցված ծառայությունների արժեքը կազմում է 392 000 (երեք հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով 8 հոգեբանական ծառայություն, յուրաքանչյուրի արժեքը՝ 49000 (քառասունինը հազար) ՀՀ դրամ:

2.2 Կողմերը համաձայնվում են փոփոխել Պայմանագրի գինը և սահմանել այն 392 000 (երեք հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ:

## 3.ՓՈԽԱԴԱՐՁՀԱՇՎԱՐԿՆԵՐ

3.1. Պատվիրատուի կողմից կատարված վճարումների և փաստացի մատուցված ծառայությունների արժեքի միջև տարբերությունը կազմում է 208000 (երկու հարյուր ութ հազար) ՀՀդրամ:

## 4.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

4.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատվիրատու**
«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 23
ՀՎՀՀ՝ 02512069
Բանկ՝ ՀՀ ՖՆ ԿԳԳՎ թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ՝ 900018003146
Լիազորված անձ՝
Հայկ Կարապետյան

---------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կատարող**
Ֆ/Ա Անի Հարությունյան
Հասցե՝ ք.Երևան, Չեխովի փ. 52, բն.24
Բանկ՝ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930033279080300
Անձնագիր՝ AT0537003
ՀԾՀ՝ 75 02 76 045 8
Ֆ/Ա Անի Հարությունյան

---------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.